Հավելված N 1
ՀՀ կառավարության 2009 թվականի
հունիսի 18-ի N - Ն որոշման

«ՋՐՎԵԺ» ԱՆՏԱՌԱՊԱՐԿԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Ջրվեժ» անտառապարկը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի հարավ-արևմտյան մասում:

«Ջրվեժ» անտառապարկի ընդհանուր տարածությունը 400,43 հեկտար է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ՋՐՎԵԺ» ԱՆՏԱՌԱՊԱՐԿԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Ջրվեժ» անտառապարկը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի հարավ-արևմտյան մասում:

Հեռավորությունը մարզկենտրոն Աբովյան քաղաքից 8,5 կմ է:

«Ջրվեժ» անտառապարկը «Ա»-«Բ» և «Ե»-«Դ» հատվածներով սահմանակից է Ողջաբերդ համայնքին, «Գ»-«Ա», «Դ»-«Ե» հատվածով՝ Ջրվեժ համայնքին, իսկ «Բ»-«Գ» հատվածով՝ Երևան քաղաքին:

«ՋՐՎԵԺ» ԱՆՏԱՌԱՊԱՐԿ - ՈՂՋԱԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾ «Ա»-«Բ»

«Ա» հանգուցային կետից սահմանը 750 մ ձգվում է հարավ՝ հասնելով դաշտային ճանապարհին, ձգվում նրա եզրով դեպի հարավ-արևմուտք՝ 150 մ, այնուհետև, ճանապարհի եզրով շարունակվելով դեպի հարավ-արևելք, բարձրանում է բլրի վրա,

որտեղից էլ շարունակում է ջրբաժանով ձգվել արևմուտք՝ հասնելով մինչև Խաչիսար լեռան մոտ գտնվող թամքոցային շրջան, այնուհետև թեքվում է հարավ և լեռան հարավային լանջի ձորակով հասնում մինչև Երևան քաղաքի վարչական սահմանը՝ «Բ» հանգուցային կետ՝ կազմելով ընդհանուր 3948 մ։

«ԶՐՎԵԺ» ԱՆՏԱՌԱՊԱՐԿ - ՈՂՋԱԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՍԱՀՄԱՆԱԳԻԾ «Ե»-«Դ»

«Ե» հանգուցային կետից սահմանը 194 մ ձգվում է հարավ՝ հասնելով լեռան գագաթային մաս, այնուհետև ջրբաժանով ձգվում է հարավ-արևմուտք, իջնում լանջով և հասնում Երևան-Գառնի խճուղի, որտեղից էլ ճանապարհի եզրով շարունակվում է մինչև «Դ» հանգուցային կետ՝ կազմելով ընդհանուր 1914 մ։

«ԶՐՎԵԺ» ԱՆՏԱՌԱՊԱՐԿ - ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳԻԾ «Բ»-«Գ»

«Բ» հանգուցային կետից սահմանը 103 մ ձգվում է հարավ-արևմուտք՝ հասնելով «Գ» հանգուցային կետ։

«ԶՐՎԵԺ» ԱՆՏԱՌԱՊԱՐԿ - ԶՐՎԵԺԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՍԱՀՄԱՆԱԳԻԾ «Գ»-«Ա»

«Գ» հանգուցային կետից սահմանը ձորն ի վեր բարձրանում է հյուսիս-արևմուտք և լեռան հարավ-արևմտյան լանջի ոլորաններով ձգվում մինչև խճուղի, այնուհետև խճուղու եզրով հասնում գերեզմանոց՝ շրջանցելով այն, հասնում է գազալցակայան, որտեղից Երևան-Գառնի խճուղուն զուգահեռ ձգվում է մինչև Զորաղբյուրի խաչմերուկի

մոտ՝ հասնելով «Ա» հանգուցային կետ՝ կազմելով 11528 մ բնագիծ: Այնուհետև, անցնելով ճանապարհը Ջրվեժի ամառանոցների սահմանով, բարձրանում է լանջն ի վեր և հասնում «Ա» հանգուցային կետ՝ կազմելով 12834 մ բնագիծ:

«ՋՐՎԵԺ» ԱՆՏԱՌԱՊԱՐԿ - ՋՐՎԵԺԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՍԱՀՄԱՆԱԳԻԾ «Դ»-«Ե»

«Դ» հանգուցային կետից, որը գտնվում է Երևան-Գառնի խճուղու եզրին, սահմանը Ջրվեժի ամառանոցների սահմանով բարձրանում է լանջն ի վեր և հասնում «Ե» հանգուցային կետ՝ կազմելով 1054 մ բնագիծ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ